# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արարատ Բադալյան Սերգուշի-ն ՀՀ ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/23 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Արտստրոմ | Արտստրոմ | «Շղթաներով մանկապարտեզային ճոճանակ» Տարիքային խումբ՝ 3-8 տարեկան, Չափսեր՝ ոչ ավելի քան 2500x(500-1500)x1800մմ, Ապահովության գոտի՝ 4500x7000մմ: Կիրառություն: Խաղասարքը նախատեսված պետք է լինի 2 երեխայի միաժամանակյա նստած օգագործման համար: Այն պետք է ունենա հակավանդալային բոլոր հատկանիշները և նախատեսված լինի հասարակական վայրում օգտագործման համար: Նստատեղեր պետք է կախված լինեն մետաղական շղթայով (առնվազն 6մմ) կախիչից, որի բարձրությունը չպետք է գերազանցի 1800մմ-ը: Նստատեղերը կարող են պատրաստված լինել ռետինից, խիտ պլաստիկից կամ մետաղից: Վերջինս ծածկված պետք է լինի ջերմոմեկուսիչ շերտով (ПВХ, փայտ կամ համարժեք): Նստատեղը պետք է ունենա հենակ և դիմացից սահմանափակիչ շղթա: Սահմանափակիչ շղթան պետք է ունենա ջերմոմեկուսիչ շերտ (առնվազն 1,2 մմ): Նստատեղը գետնից պետք է կախված լինի 350-450մմ բարձրության վրա: Նյութեր՝ պողպատե պրոֆիլ (առնվազն 50x50x2մմ կամ համարժեք), մետաղական շղթա (առնվազն 6մմ): |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ներկվածք: Խաղասարքը կարող է և փոշեներկված լինել, և ներկված լինել երկշերտ փչվածքի տարբերակով: Ներկերը պետք է նախատեսված լինեն երեխաների անընդհատ կացության վայրերի համար: Ուղեկցվող փաստաթղթեր: Խաղասարքի հետ պետք է տրվի խաղասարքի շահագործման անձնագիր: Տեղադրում: Խաղասարքը պետք է բաղկացած լինի երեք մասից՝ երկու հենասյուն և շղթաներով նստատեղերի կախիչ: Հենասյուները մետաղական ամրանների (առնվազն 14մմ) և բետոնացման (B200-250) միջոցով ֆիքսվում է գետնի մեջ 400մմ խորությամբ: Կախիչն ամրացվում է հենասյուներին: Խաղասարքը պետք է պատրաստված լինի համաձայն ԳՈՍՏ 34614.5 (EN 1176-5:2017)-ի: Խաղասարքին տրվում է առնվազն 1 տարվա երաշխիք: Տեխնիկական սպասարկման նախընտրելի հաճախականությունը՝ 1 տարի: Խաղասարքը նախատեսված չէ սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների համար: Ապրանքի տեղափոխումը և տեղադրումը կատարվում է մատակարարի հաշվին: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Արարատ Բաղալյան Սերգուշի в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/23 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | |